ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2024թ. № 627

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԿՐՏՉԻ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ Սվետլանա Մկրտչի Շուշանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Լոռու մարզ, ք. Սպիտակ, Գր. Լուսավորիչ թաղամաս թիվ 18 շենք թիվ 1 բնակելի տուն» հասցեում գտնվող 06-006-0188-0078 կադաստրային ծածկագրով 0,068 հա մակերեսով հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տան կիսանկուղը սխալմամբ չի չափագրվել և պետական գրանցում չի ստացել, 1990 թվականին կառուցված բնակելի տան կիսանկուղը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, շինությունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1393202 վկայականը, «Հայկ Ալեքսանի Ավագյանի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Սվետլանա Մկրտչի Շուշանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Սվետլանա Մնացականի Շուշանյանի (ծնված 10.07.1949թ.) սեփականության իրավունքը «Լոռու մարզ, ք. Սպիտակ, Գր. Լուսավորիչ թաղամաս թիվ 18 շենք թիվ 1 բնակելի տուն» հասցեում գտնվող 06-006-0188-0078 կադաստրային ծածկագրով 0,068 հա մակերեսով հողամասի վրա 1990 թվականին կառուցված 60,94 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան կիսանկուղի նկատմամբ:

2. Հաստատել 06-006-0188-0078 կադաստրային ծածկագրով 0,068 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության հատակագիծը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հունիսի 18
ք.Սպիտակ